

Թէ Հայաստանում Արամից յետոյ մինչև Սարգանսպաղի ժամանակակից Պարոյրը եղած են 30 թագաւոր, որոնք ոչինչ բանով նշանաւոր չեղան:

Սակայն Նինիասից յետոյ Ասորեստանի քսաներորդ թագաւոր Տեղատամնուր Պրիամնսին օգնութիւն կուղարկէ Եթովպեան զօրքը Մեծնի առաջնորդութեամբ, որը Թեսալացիներից սպանվեցաւ: Խորենացին սորան համեմատ կանէ, թէ Տեղատամնուր Եթովպեան զօրքով ուղարկեց նոյնպէս Արայից յետոյ հայկական քսանմիներորդ թագաւոր Զարայի, որին Տրոյական պատերազմի մէջ քաջ հելլենները սպանեցին:

Ասորեստանի Լար Սարգանսպաղ թագաւորի օրով նինուէն կկործանվի Մարաստանցի Արբակէսի ձեռով, Եթէ դառնանք Խորենացու պատմութեանը այնտեղ ևս կտեսնենք, որ հայկական Լ. թագաւոր Պարայի օրով, նինուէն հարկադրված էր հպատակելու Արբակէսին, որը ի շնորհակալութիւն Պարոյրի ցոյց տուած ծառայութեան, թողլ կայ նորան թագաւորական տիտղոս կրելու:

Աստի եթէ մենք Ասորեստանի թագաւորների անունների ցուցակը համեմատենք Խորենացու մէջ գտնված հայկական թագաւորների միւսնոյն ցուցակի հետ այն ժամանակը կտեսնենք, որ վերջիններս շատ անգամ առաջիններին նմանութեամբ են ստեղծված: Այսպէս օրինակ. Անուշաւանը Խորենացու մէջ Աս. կանուանվի, Բայց միւսնոյն ժամանակը Խորենացին նորա ժամանակակիցին կանուանէ Ասորեստանի Սասարիս թագաւոր:

Յետոյ, Հայկակի ժամանակակից անուանված է Բելուս: Եթէ մենք երկու անունի մէջ վերջաւորութիւններ ձգենք, ստանալու ենք Հայի ժամանակակից Բէլի մեզ յայտնի անունները:

Մեթուս — Զեթուս կամ Զեթուս ժամանակակից է, Երկու անունն ևս ծագած են այն բառերից, որոնք պարսկերէն և հայերէն կրակ կնշանակեն:

Սուլարմոս համաձայնեցրած է Շաւարշի հետ, և ըն:

Այսպէս Կառգիոսի Ասորեստանեկան կարծված պատմութեան գրեթէ բոլոր փաստերը կկրկնվին հայկական պատմութեան մէջ այն փոփոխութիւններով, որոնց կպահանջէին հայկական պատմութեան ուրիշ հանգամանքները:

U. S. F.

ԵՐԿՐՈՐԻ ՓԻՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. (149—146 թ.)

(Աւերջին տետրակում Միջին դարերից մի յօդուած հրատարակելով այժմ մեր խոստման համաձայն հին պատմութեանից ձեմարանի Գ. դատարանի աշակերտ Մ. Դանազեզեանի գրաւոր պատասխանը կղետեղենք առանց սրբագրելու): Խ. Բ.

Հասմը արդէն համարեա բոլոր Հին պատմական աշխարհին սեր պարծած էր, միայն հզօր Կարթագենն էր անպատ մնացել: Թեպէտ Կարթագենը

արդէն երկու պատերազմներ վարած էր Հոօմի հետ սակայն նազիս ծագումնաբեր ջնայելով որ երկրորդ փրենիկեան պատերազմից յետոյ կապված խաղաղութեամբ (զաշնադրութեամբ) Աարթաղէնացիները զրկված էին նաեւրից և ստիպված էին վճարել 300 տաղանա:

Արդէն վաղուց հոօմայական ծերակոյտում Աարթաղէնի կորուստը վրձնած էին: Սակայն մի պատճառ չէին գտնում քաղաքը կործանելու, ասիւթըն ևս չուտով յայտնվեցաւ: Աարթաղէնից գեպի արևելք կար Աարթաղէնի մի հարևան երկիր, որի թագաւոր Մասինիսայն անիրաւար յարձակվեցաւ Աարթաղէնի կալուածների վերայ և շատ տեղեր աւերեց և քանդեց:

Աարթաղէնացիները բողոքեցին Հոօմին, իսկ Հոօմը ուղարկեց զաժան Աասունին քննիչ այս գործին: Ի հարկէ նա յօդուտ Մասինիսային պիտի վճռէր գործը, որից շատ անբաւական մնացին Աարթաղէնացիները: Աատունը զարմացած Աարթաղէնի գեղեցիկութեան, պայծառութեան, վաճառականութեան, շէնութեան և հարստութեան վերայ, երբ Հոօմ վերադարձաւ, խորհուրդ տուաւ ծերակոյտին, Հոօմի ապահովութեան համար: Աարթաղէնը քանդել, և իւրաքանչիւր իւր ճառը, ինչի վերայ և խօսէր, նա վերջացնումը հեռեւեղ խօսքերով. «Sed censeo Cartaginem delendam esse — (բայց ես կարծումեմ որ Աարթաղէնը քանդել պէտքէ): Նորա խօսքերը ազգեցութիւն ունէին: Հոօմայեցիները մի փոքրիկ ասիւթի էին սպասում: Նոյն ասիւթը չուտով գտնվեցաւ: Հոօմայեցիներին զաշնակից միևնոյն Մասինիսայն կրկին յարձակվեցաւ Աարթաղէնի հողերի վերայ: Այս անգամ Աարթաղէնացիներն ոչ ևս չդիմացան և իւրեանք գէնք բարձրացրին Մասինիսայի դէմ: Չնայելով այն զաշնադրութեանը, որով նորա պարտաւորված էին ասանց Հոօմայեցիներին հրամանի ոչ գրի հետ չպատերազմել:

Նոր ծերակոյտին հասաւ այս տեղեկութիւնը, իսկոյն նաւատորմիչ պատրաստեցին և Սկիպիօնի առաջնորդութեամբ ուղարկեցին Աֆրիկայ: Նրա այս լուրը Աարթաղէն հասաւ, բոլոր քաղաքը խռովեցաւ, և չէր իմանում ինչ անէ: Աերջադէս մարդիկ ընտրեցին իւրեանցից և սրտգամաւոր ուղարկեցին հոօմայական բանակը, ներսողութիւն և գիթութիւն խնդրելով, և միևնոյն ժամանակ յանձն առան մինչև անգամ Հոօմայեցիներին «հարտակ» կոչվել, Հոօմայեցիները այս ընդունեցին, բայց քանի մի պայմաններով, այսինքն: Աարթաղէնացիները նախ պէտքէ ձեռք բաշէին բոլոր Աֆրիկայից զուրս ունեցած կրկիրներից, երկրորդ նորա բոլոր իւրեանց նաւատորմիչը յանձնէին Հոօմայեցիներին, երրորդ պիտի Հոօմայեցիներին յանձնվէին բոլոր զէնքերը: Երբ այս ամեն պայմանները յանձն առան Աարթաղէնացիները և կատարեցին, այն ժամանակ Սկիպիօնը յայտնեց զնախնայ Աարթաղէնացիներին ծերակոյտի վերջին կամքը, այն է. «Եթէ նորա կամենումն սպրիւ թող առնեն իւրեանց հարստութիւնները և երթան Աֆրիկայի խորքերում շինեն իւրեանց համար նոր քաղաք»: Հոօմի այս խորամանկ կամքը զայրացրեց Աարթաղէնացիներին և

ամենքը միաձայն վճռեցին մինչև վերջին շունչը պատերազմել պաշտպանելու չայրենի փառասուր հողը։ Ստրուկները ազատվեցան, բանտարկվածները արձակվեցան, ամեն բան շարժողութեան մէջ էր, ամենայն ոք պատրաստութիւն էր տեսնում թշնամու դէմ։

Բոլորը ինչ որ մտաղ անու՛ն էր կրում՝ քաղաքի մէջ հաւաքվեցաւ և սկսան զէնք պատրաստել, Բոլոր քաղաքը մի տեսակ զինարան դարձաւ, ամեն տուն, պալատ, տաճար գործարան եղաւ։ Ահագին շինութիւններ քանդուձէին, նոցա տանիքի փայտերից նաւ պատրաստելու համար, Բոլոր Աարթագէնի կանայքը և օրիորդներ իւրեանց մազերից նաւերի համար պարաններ էին պատրաստում և աղեղների համար լարեր, Աարթագէնի մէջ ամենայն ոք, ձեր թէ մանուկ, կին թէ օրիորդ, ամենքն ևս պատրաստված էին զիմազրելու, ամեն ոք իւր մտքի մէջ դրած էր. «կամ ապրել և հայրենիքը ազատ տեսնել և կամ մեռնիլ և հայրենիքի քանդումը շտանել»։ Աերջապէս սոսկալի պատերազմը սկսվեցաւ. այստեղ մենք տեսնում ենք ահագին բազմութեան դէմ հայրենասէր Աարթագէնացիների յուսահատ պաշտպանութիւնը։ Պաշարումը ծովից և ցամաքից սաստկանում էր, բայց Աարթագէնացիները երկու տարի շարունակ քաջութեամբ պաշտպանվում էին վերջապէս Հոռոմայեցիները յաջողեցան քանդել պարսպի մի կողմը և խուճ բազմութեամբ ներս թափվեցան։ Սկսվեցաւ արիւնահեղ կոտորած. Հոռոմայեցիները որ կողմ դառնում էին, ամենայն կողմում սուր և հուր էին գտնում, իւրաքանչիւր փողոց ատանձին պաշտպանվում էր։ Աեց օր և վեց զիշեր պէտք եղաւ Հոռոմայեցիներին բոլոր քաղաքին տիրանալու համար։ Երբ Հոռոմայական զօրքերը փողոցները մարբեցին, պատատորված էին այժմ իւրաքանչիւր տան հետ պատերազմել, ամենայն տուն մի մի միջնաբերդ էր դարձել, իսկ տները նուաճվելուց յետոյ, Հոռոմայեցիները ստիպված էին մինչև անգամ տան ամեն մի անկիւն կռուով առնել, Աարթագէնի սպարապետ Հասդուբալը վերջապէս վհատած, գնաց յաղթական Սկիպիօնի ռաներն ընկաւ և շնորհ խնդրեց, Ընդհակառակն նորա հայրենասէր և քաջասիրտ կինը, իւր ամուսնի վատութեան վերայ զայրանալով իւր երկու զաւակներին սպաննց և ինքն ևս կրակի մէջ ընկաւ։

Երբ Աարթագէնի անկման լուրը Հոռոմ հասաւ, անպատմելի ուրախութիւն պատճառեց, Ծերակոյտը հրամայեց, որ քաղաքը հիմնովին կործանեն։ Ուստի Սկիպիօնը քաղաքը կրակի տուաւ։ Այրման ժամանակ բազմաթիւ քաղաքացիներ ձերեր և տղաներ ընկնում էին կրակի մէջ և թաղվում էին իւրեանց հայրենական տաճարների և տների մոխրի տակ։ Միւսնոյն ժամանակ երբ քաղաքը այրվում էր, Սկիպիօն մի մտաւկայ բլրի վերայից նայում էր քաղաքի այրմանը և մտաբերում էր հռչակաւոր յոյն բանաստեղծ — երգիչ Հոմերոսի երկտողը Տրոյայի այրման վերայ. «Ագայ մի օր, երբ սուրբ Տրոյան ևս կընկնի և կվերջվի նորանից նորա քաջ Պրիամոսը, և մտածում էր Հոռոմի ապագայի մասին, Հրդեհը տասն և հինգ օր տեւելուց

յետոյ, Կարժազէնից կոյտ մի մոխիր միայն մնաց:

Ահա այսպիսի ողբալի վերջ ունեցաւ այն. հռչակաւոր քաղաքը, որի սկիզբն առանձին տեսակ պարագաներից յառաջացաւ. ահա այսպիսի խեղճ վախճան ունեցաւ այն քաղաքը, որի մեծ և հանճարաւոր զօրապետ Էաննիրալը իւր սակաւաթիւ և քաջ հայրենակիցներով սասանեցնուձէր երբեմն հին աշխարհը:

Աֆրիկան հռոմայական դաւառ դարձաւ:

ՅՈՒՑԱԿ

Ջաննգան վիճակադրական տեղեկութեանց, գտանեցելոց ի վիճակային Կոնստանտնուպոլիսի Հայոց Աստրախանայ, պատրաստեալ յամսեան մայիսի 1880 ամի:

	ՄՈՒՏՔ	Գոմար	Ը-Ք	Կ-Պ
Ի պակադրամոց
Ի հոգեքաժնից
Ի որբադրամոց
Ի գանձանակաց
Յօժմանէ պատկերաց
Ի Զափարեքական վկայականաց
Ի հոգեւորականաց նշանակելոց ի տօնավաճառն Նիժնայի
Հոգեւոր կառավարութեան Հայոց Ղզլարայ	.	.	389	73
Քեմական եւ Ծխական երկսեռ դպրոցաց
Աստրախանայ երկուց սեռից թէմականաց	.	.	6212	95
Ղզլարայ երկուց սեռից թէմականաց	.	.	5489	15
Մոզզոկայ երկուց սեռից ծխականաց	.	.	5639	28
Եղեսիոյ ծխական Գպրոցի	.	.	546	28
Ս. Խաչ քաղաքի ծխական Գպրոցի	.	.	407	5
Ստաւրապօլու ծխական երկսեռ դպրոցի	.	.	1371	51
Արմաւիրայ ծխական երկսեռ դպրոցաց	.	.	857	41
Եկատերինօղարայ ծխական երկսեռ դպրոցաց	.	.	1919	54
Վլադիկովկասու ծխական դպրոցի	.	.	855	55
	ԾԱԽՔ		Ը-Ք	Կ-Պ
Ի սնունդ վիճակաւորի	.	.	1200	«
Ի սնունդ անդամոյ վարդապետի	.	.	500	«
Ի ռոճիկ ատենադպրի	.	.	400	«
Ի ռոճիկ չորից գրապրաց	.	.	420	«
Ի ռոճիկ պահապանի	.	.	96	«
Ի պէտս դիւանատան	.	.	169	«
Հոգեւոր կառավարութեան Հայոց Ղզլարայ	.	.	220	«
Քեմական եւ ծխական երկսեռ դպրոցաց
Աստրախանայ երկուց սեռից թէմականաց	.	.	5607	74
Ղզլարայ երկուց սեռից թէմականաց	.	.	5489	«
Մոզզոկայ երկուց սեռից ծխականաց	.	.	5068	51
Եղեսիոյ ծխական դպրոցի	.	.	559	58
Ս. Խաչ քաղաքի ծխական դպրոցի	.	.	404	90
Ստաւրապօլայ ծխական երկսեռ դպրոցի	.	.	1570	«
Արմաւիրայ ծխական երկսեռ դպրոցաց	.	.	806	78
Եկատերինօղարայ ծխական երկսեռ դպրոցաց	.	.	1602	25
Վլադիկովկասու ծխական դպրոցի	.	.	584	22